ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 803
« 04» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. թիվ 232-Ա, 233-Ա, 234-Ա և 235-Ա որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» դեկտեմբերի 2019թ. № 232-Ա

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0017-0031 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Լեջան գյուղի բնակչուհի Ռելիդա Ռուբենի Սահակյանի դիմումը, 03.12.2019թ. թիվ 3795 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը (Գործ թիվ ԼԴ/0633/02/19), «Գ. Մեսրոպյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով, գուքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0017-0031 ծածկագրի տակ գտնվող 0.09437 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0017-0031 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 0.09437քմ.

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.09437 քմ. մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Ռելիդա Ռուբենի Սահակյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի , Լեջան գյուղի 06-038-0017-0031 ծածկագրի տակ գտնվող 0.09437քմ. մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 42.65 քմ մակերեսով բնակելի տան առաջին հարկի, 11.45 քմ մակերեսով բաց պատշգամբի, 18.02 քմ մակերեսով անասնագոմի, 39.15 քմ և 0.19 քմ մակերեսներով պրիսպների նկատմամբ համաձայն հավելվածի՝ ճանաչել Ռելիդա Ռուբենի Սահակյանի սեփականության իրավունքը:

4. Հաստատել 06-038-0017-0031 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք գյուղ Լեջան 6- րդ փողոց, թիվ 11 բնակելի տուն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.տ

2019թ. դեկտեմբերի 04
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 04 » դեկտեմբերի 2019թ. № 233-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ 06-105-0009-0014 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.55 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐԹՈՒՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ղեկավարվելով հողային օրենսգրքի 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 12.07.2019թ. հողամասն աճուրդով վաճառելու թիվ 29-Ա որոշումը և Լոռի Բերդ համայնքում 29.11.2019թ. կայացած աճուրդ - վաճառքի թիվ 01 արձանագրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքում 29.11.2019թ. կայացած աճուրդում հաղթող ճանաչված Արթուր Գաբրիելյանին օտարել 06-105-0009-0014 ծածկագրով 0.55 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողատեսքը աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 840.000 ՀՀ դրամով:
2. 10-օրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո Արթուր Գաբրիելյանի հետ կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր:
3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Արթուր Գաբրիելյանի միջոցների հաշվին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կնք
2019թ. դեկտեմբերի 04
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 04 » դեկտեմբերի 2019թ. № 234-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0041-0030 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.2822 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՐԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ղեկավարվելով հողային օրենսգրքի 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 07.06.2019թ. հողամասն աճուրդով վաճառելու թիվ 25-Ա որոշումը և Լոռի Բերդ համայնքում 29.11.2019թ. կայացած աճուրդ - վաճառքի թիվ 02 արձանագրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքում 29.11.2019թ. կայացած աճուրդում հաղթող ճանաչված Կարեն Հովսեփյանին օտարել 06-038-0041-0030 ծածկագրով 0.2822 հա մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողատեսքը աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 436.000 ՀՀ դրամով:
2. 10-օրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո Կարեն Հովսսեփյանի հետ կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր:
3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Կարեն Հովսեփյանի միջոցների հաշվին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

կնք
2019թ. դեկտեմբերի 04
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 04 » դեկտեմբերի 2019թ. № 235-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-038-0017-0020 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.092 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի 06-038-0017-0020 ծածկագրով 0.092 հա մակերեսով տնամերձին տրամադրել՝ գ. Լեջան, 5-րդ փող., թիվ 16 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Է.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.տ

2019թ. դեկտեմբերի 04
գ. Լոռի Բերդ